4. Վճռի օրինական ուժի մեջ մտնելը.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է պատվիրատուի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 17-րդ հոդվածի 7-րդ մասով, 109-րդ, 179-րդ, 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ, 360-362-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ռաֆ–Օջախ» ՍՊԸ–ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղար Ա.Ղազարյանի 27.11.2023 թվականի թիվ 382–Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել:
2. Անվավեր ճանաչել ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղարի 27.11.2023 թվականի թիվ 382–Ա հրամանը (որոշումը):
3. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության ջրային կոմիտեից հօգուտ «Ռաֆ–Օջախ» ՍՊԸ–ի բռնագանձել 100 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:
4. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Վճիռը _____թվականին մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**